

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Գուրաւն, Բ. տարի, թիւ 91 Մեր հողագործը դառը ոչ միայն Թիւրքիայում և Պարսկաստանում, այլև Կովկասում, տարաբաղդաբար, անշափ տգէտ է ու անընթերցասէր և պահանջ չի դրում ունենալ՝ իր աշխատանքը դիւրացնող մի մասնագիտական թերթի՝ Ինչպէս երևում է «Գութանի» այս համարի ծանուցումներից, նրա բաժանորդների թիւը բաւական սահմանափակ է և, բացի այդ, եղածներն էլ չեն փաշլում իրենց պարտաճանաչութեամբ, ստիպելով լաճախակի լիշեցնել ապառիկների մասին... Չը նայած «Ղապատող դժուարութեանց» պ. Գ. Մեծատուրեանը չի յուսահատում. «Գետն անցնողը առուին մէջ չի խեղտուի»—քաջալերում է ինքն իրան «Գութանի» հիմնադիր—տնօրէնը, Հայկական կեանքի 40—50 տարուայ մօտիկ անցեալը ցոյց է տալիս որ լաճախ ջախջախիչ է, հասարակական ձեռնարկութիւնների յարատեւութեան տեսակէտից, հայի քառմանի անտարբերութիւնը և հասարակական օգտի անգիտութիւնը։ Անշուշտ չը պէտք է յուսահատուել, բայց մի և նոյն ժամանակ չոյս դնել միայն անհատական զոհաբերութիւնների վրայ նշանակում է հրաշքներ սպասել։ Ոչ, պէտք է ամեն կերպ աշխատել որ զարթնի մասսայի մէջ հետաքրքրութիւն դէպի տպագրական խօսքը, ցոյց տալ որ, օրինակ, «Գութանից» մեր

հողագործը, գիւղացին, կարող է օգուտ ստանալ, բարոյութիւնով թերթի խորհուրդների համաձայն իր նահապետական, ողորմելի տնտեսութիւնը Իսկ դրա համար պէտք է «Գութանը» մօտ կանգնի մեր իրականութեան, կապ պահպանի մեր երկրագործ դասակարգի կեանքի հետ։ Մեզ թւում է որ, օրինակ, վատ չէր լինի այդ նպատակով, «Գութանում» աւելացնել գիւղատնտեսական քրոնիկ և մի բաժին, որի մէջ խմբագրութիւնը պատասխանէր տար բաժանորդների կողմից արուած գիւղատնտեսական հարցերին։ Երկրագործ բաժանորդը միշտ կարող էր այդպիսով մասնագէտների խորհուրդներին դիմել, գիւղատնտեսական օգնութիւն ստանալ մասնագէտներից։ Այդ երկու բաժինների ներմուծումով, կարծում ենք, աւելի կենդանի ու սերտ կապ կը ստեղծուէր «Գութանի» և մեր երկրագործ դասի մէջ։ Գրանով հանդէսն աւելի մեծ ժողովրդականութիւն կը ստանար, նրա բաժանորդների թիւը կ'աւելանար, որով և աւելի մեծ ապահովութիւն կը ստանար նրա յարատեւութիւնը։ Բաւական է որ իւրաքանչիւր հայկական գիւղ նոյն իսկ մի մի բաժանորդ տար այդ թերթին։ Սակայն չպէտք է մօռանալ և մի բան. ինչպէս ասել էինք մի անգամ (1901, № 3), որպէս զի «Գութանը» մատ-

չելի լինի մասնային՝ պէտք է նրա բաժանորդագիրը պակասեցնել. իսկապէս, դժուար է սպասել որ 10—12 լղարիկ տետրակների համար (10—16 երես իւրաքանչիւրում) 6 առաջի վճարի մեր գիւղացին, իւր թշուառ բիւզժէից Ի հարկէ հաւաքական ոլթով կարող էր ամեն մի գիւղական համայնք բաժանորդ գրուել, կարող են գտնուել նուիրատուներ և այլն, բայց հէնց այժմ լոյս ղնել, այդ բաների վրայ նշանակում է խաբուել. ուրեմն, մատչելի, հետաքրքրական, ժողովրդական դարձնել հանդէսը—ահա միակ իրական միջոցը:

«Գոթանի» այս համարի բովանդակութիւնը հետեւեալն է.—Արուեստագիտական կրթութիւն.—Ճահիճներու կազմուիլը գիւրացնող և լառաջ բերող զլխատր պատճառները.—Շերամի հիանդութիւնները.—Քխտուիլիք ձուերը.—Մխախտտի մշակութիւնը:

Գեղունի, պատկերազարդ հալթերթի Ա. տարի № 4, 5, 6, լուծիւս.—Անցեալ դեկտեմբերի 1-ից Վենետիկի միլիթարեանները, իբրև «Բաղմալէպի» (լաւելումս *) երկու ամիսը մէկ անգամ հրատարակում են այս շքեղ պատկերազարդ հանդէսը, որի մաքուր հասցիքի կէսը՝ առանց կրօնքի խտրութեան պիտի չատկացուի ազգիս որբիկներուն: Գեղունիի արտաքինը իր գեղեցկութեամբ չիղեցնում է եւրոպական պատկերազարդ ամենաընտիր հրատարակութիւնները: Սակայն բովանդակութեան մէջ ալիքան էլ ընտրութիւն և թխտեմ չի նկատուում: Այս համարում ուղադրաւ է

*) «Բաղմալէպի» բաժանորդներին համար Գ ե ղ ու ի ի տարեկան բաժնեգիրը է 1 ֆր. ոչ բաժանորդների 3 ֆր.:

Հրպետի «Հայոց արդի գրականութիւնը», որի մէջ բնորոշ ու խոշոր գծերով ուրուագծուած է Թիւրքիայի հայոց արդի գրականութեան ծագման և զլխատր արտապատկութիւնների պատկերը, աւելի մասնաւորապէս կանգ առնելով 1850—1880 շրջանի գործիչների վրայ:—Աւելի մակերեսութային է առաստաղից գերականութեան մասին արած գիտողութիւնը (օրինակ, հրապարակագրութեան մասին), սակայն ընդարձակ տեսութիւն առաստաղից արդի մատենագրութեան վրայ ջողուածդիւրը թողնում է աւելի պատեհ դէպքի:

Մեղ թուում է որ վատ չէր լինի եթէ «Գեղունին» տար և ընթացիկ ժամանակակից համաշխարհային կեանքի քաղաքական, հասարակական, դրական և գիտական երևոյթներից և անցքերից իլլիստրատիւններով զարդարած համառօտ տեսութիւններ, ինչպէս այդ անում են եւրոպական պատկերազարդ թերթերը: Դրանով կը լրանար մեր պարբերական հրատարակութիւնների ալն ահագին բաց տեղը, որ զանազան հին ու մին կլիշէներով թուղթ մրտող մեր հրատարակչներից ոմառք իզուր են ջանում լքցնել... Գեղունին ցոյց տուեց որ նա կարող է վառատր կերպով լրացնել այդ պակասը:

Անանիս, մայիս «Արդի հայերէնը» ջողուածի մէջ նորից և նորից արծարծում է աշխարհաբարի զարգացման, կանոնատրութեան մասին: Վերջին ժամանակներս այդ հարցը շատ է խօսեցնել տուել իր մասին մեր մամուլի մէջ: Գ. Չօպանեանի տեսութիւններին մենք չենք հետեւի, մասնաւոր ուր նա զլխատրապէս խօսում է արեւմտեան հայերէնի ձեւերի և կանոնների մասին: Մենք միայն կը վերցրնենք նրա մի քանի դատողու-

թիւնները հոսահայերի մասին, ցոյց տալու համար թէ ինչպէս են մեզ ճանաչում թիւրքահայերը՝ Գ. Զօպանեան շատ զրական կերպով հաւատացնում է որ մենք, հոսահայերս, գործ ենք անում պոսի-խողպիա, պետագոսիա, տեմպերատուր, կրիտիկա, պօէզիա՝ Գեր-ջին երկու բառերը, այո՛, մեզանում գործածական են, բայց հետաքրքրական կը լինէր իմանալ թէ ո՞րտեղ է պ. Զօպանեանը տեսել որ առհասարակ հոսահայը գործ անէր պոսիխողպիա, պետագոսիա, տեմպերատուր՝ բառերը, քանի որ մենք վաղուց անփոփոխ գործ ենք անում դրանց համանիշ հայերէն բառերը — հոգեբանութիւն, մանկավարժութիւն, բարեխառնութիւն։ Առաջին անգամն ենք տեսնում որ լուրջ ուսումնասիրութեան լատակնութիւն ունեցող մի չօղուածում փաստերը ստեղծուէին երեւակալութեամբ։

Յանկալի չէր միթէ որ հոսահայերի մասին խօսողը գոնէ քիչ ծանօթ լինէր նրանց գործերին։ Գ. Զօպանեան ասում է թէ Ս. Նազարեանցը կազմել է հոսահայերի աշխարհաբարը Թիֆլիսի բարբառի վրայ, մինչդեռ ամեն մէկին յայտնի է որ մեր լեզուի հիմքը արաբատեան բարբառն է և ոչ թէ Թիֆլիսինը։ Դուցէ պ. Զօպանեանի համար Թիֆլիսն էլ Արարատ է, բայց այսպիսի բան մտածելուց առաջ նա պիտի փոքր ինչ տեղեկանար, գոնէ հարց ու փորձ անէր, և այն ժամանակ կ'իմանար, որ Թիֆլիսի բարբառի և արաբատեան բարբառի մէջ առնուադն զանազանութիւն շատ կայ։

Իստելով ներկայ աշխարհաբարի երկու բաժանումների մասին (արեւմտեան և արեւելեան), պ. Զօպանեան արձակում է հետեւեալ վճիռը։ Եթէ կայ արեւելեան աշխարհաբար, ապա որ պատասխանա-

տուն է, քիչ մը, Ս. Նազարեանցը, այն միջոցին ուր արեւելեան հայերէնը հիմնեց, արեւմտեան հայերէնը՝ թէպէտ ոչ ըլլորովին կադմուս՝ արդէն ունէր սակաւ ամբողջ գրականութիւն մը, և հոսահայ գրողներէն շատերը կը գրէին լեզուով մը որ շատ մօտ էր արեւմտեան հայոց լեզուին. եթէ Նազարեանց արեւմտեան հայերէնն ընդգրկած ըլլար՝ լարգելով անոր անդրանիւթիւնը՝ այժմ միակ գրական լեզու մը կ'ունենային հայերը. բայց Նազարեանց կուզէր գրաբարստան հայերէնին դէմ պայքարել։

Այս պարբերութեան մէջ մի հատ ուղիղ բառ չը կայ՝ Նախ և առաջ Նազարեանցը արեւելեան լեզուի «հիմնող» չէր և չէր էլ կարող լինել. անհատը լեզու հիմնող չէ, միայն ժողովուրդը կարող է այդպիսի բան անել։ Նազարեանցից առաջ աշխարհաբար գրողներ ունեցել ենք. ահա «Վէրք Հայաստանին», ահա աշխարհաբար աւետարանը, «Արարատ» շաբաթաթերթը. դրանցից ո՞րն է ցոյց տալիս թէ շատերը «կը գրէին լեզուով մը որ շատ մօտ էր արեւմտեան հայոց լեզուին»։ Այդպիսի բան չէր կարող լինել, քանի որ արեւելեան հայերի ժողովուրդական, խօսակցական լեզուն ունի այն առանձնաշատկութիւնները, որոնք զանազանում են մեր աշխարհաբարի լեզուն արեւմտեանից։ Այս տարբերութիւնը արհեստական չէ, Նազարեանցի կամ մի ուրիշի ստեղծածը չէ, այլ բուն ժողովրդական լեզուի շատկութիւններից է բղխում։ Նազարեանցը պայքարում էր, ճիշտ է. բայց ոչ գրաբարստան հայերէնի դէմ, ինչպէս կարծում է պ. Զօպանեանը, այլ իսկական, զուտ գրաբարի դէմ. ինքը Նազարեանցը հէնց գրաբարստան աշխարհաբարի կողմնա-

կից էր. բաական է հենց մի երես կարողալ նրա գրտածքներից, այս բանը հասկանալու համար, ու այսպէս, նաղարեանցը ոչինչ պատասխանատուութիւն չունի. լեզու բաժանողը նա չէ եղել, նա միայն տեսաւ որ լեզուն վաղուց բաժանել է ինքը ժողովուրդը և ընդունեց այդ պատմական եղելութիւնը, լաւ իմանալով որ երկու լեզուից, երկու ծաղկից, ինչպէս ինքն էր առում, վնաս չը կալ և պէտք է թող տալ որ ժամանակը կարգադրէ այդ հարցը. — նաղարեանցը մինչև իսկ ուզում էր թիւրքահայոց լեզուի մի քանի ձեւերը փոխ առնել, բայց այդ չաջողուեց ներքին, ինչպէս չաջողուեց նաեւ Ստեփանէիին, որ մի քանի բան մտցրել էր իր «Հայկական Աշխարհի» մէջ, բայց միայն ինքն էր գործ ածում:

Պ. Զօպանեան առաջարկում է որ ռուսահայերը և թիւրքահայերը իրարից փոխ առնեն իրանց լեզուական հարստութիւնները: Դա լաւ միտք է. և ռուսահայերը, պէտք է խոստովանել, անում են այդ բանը, ընդունում են թիւրքահայերից բառեր, ձեւեր, իսկ թիւրքահայերը՝ Ահա ինքը Զօպանեանը խօսում է տառադարձութեան մասին: Նա խոստովանում է որ մեր ընդունած տառադարձութիւնը անելի ճիշտ է, որմենք տառերի հին հընչումը հարադատօրէն պահել ենք: Մի եւ նոյն ժամանակ ինքը պ. Զօպանեանը ոչ միայն գրում է Վամպէթթա, ձէյմա Պրալա, տլլեւ պահանջում է որ այդպէս էլ գրեն ուրիշ թիւրքահայերը: Ուրիշ պատճառարանութիւն չը կալ, բացի միայն նրանից, որ եթէ գրուի Գամբէտտա, ինչպէս որ ճիշտ է, թիւրքահայերը կը կարդան «Kam-pedda» Բայց մի՞թէ անկարելի է գրաւ դէմ մի բան անել: Ռուսահայերն էլ 10—20 տարի առաջ ունին այդպիսի տառադարձութիւն

և հնչումներ. բայց դարձեալ վերացրին այդ պակասութիւնը, վերականգնելով տառերի հարադատ և իսկական հնչիւնները: Թիւրքահայերը նոյն այսպիսի մի ապացուցուած, անվիճելի ճշմարտութիւնը չեն ուզում ընդունել ռուսահայերից, մի՞թէ նրանք ընդունակ կը լինեն լեզուները եթէ ոչ միացնելու, դոնէ մօտեցնելու համար որ և է գլխողութիւն անել: Լեզուական շօվինիզմը դեռ պօլսեցիներին ամենահիւանդոտ կողմն է. ապացուց. Բաֆֆիի «Խաղ-Փուշը», թարգմանուած «Անահիտի» մէջ թիւրքահայ լեզուով: Աւելի հեռու գնալ անհեթեթութեան մէջ հաղիթէ կարելի լինի և լեզուների միացման մասին այժմ անկարելի էլ է լուրջ կերպով խօսել:

РУССКАЯ МЫСЛЬ, լուրիս Դօկտոր Ի. Գորգօն տպագրել է մի հետաքրքրական լօղուած «Աթօնիզմ և Գրիստոնեաներ» վերնագրով: Թալտնի է որ վերջին տարիներս հրէական ազգի մէջ ակտուել է մի շարժում, որ կոչւում է «աթօնիզմ» և որի նպատակն է հայրենիք ստեղծել աշխարհի չորս կողմերում ցրուած հրէաների համար և մտաւոր ու կուլտուրական մի լեզուախոսութիւն առաջացնել այդ հին ազգի մէջ: Հրէական հայրենիքը, ինչպէս լատինի է, կալ, դա Պալեստինն է: Հաւաքել այդուհի հրէութիւնը, հազարաւոր տարիների թափառումներից լետոյ հաստատել այն հողի վրայ, ուր հազարաւոր տարիներ տարել էին Աբրահամի որդիները — ահա ինչ է ուզում «աթօնիզմը»: Վերջին տարիներս շատ և շատ խօսուեց հրէական այդ շարժման մասին. արտասահմանում իւրաքանչիւր տարի կազմում են սիօնիստների ժողովներ, ուր քննում են այդ համահրէական ընկերութեան հարցերը: Ի հարկէ, զլխաւոր հարցը այն է՝

թէ որքան իրագործելի է սիօնիդ-մըլ Հաւատում են շատերը թէ կա-րելի է հրէաներին նորից իրանց պատմական հայրենիքը գարձնել: Բայց կան և այնպիսիները, որոնք այդ բանին չեն հաւատում: Ի նկա-տի ունենալով թէ հրէական աղգը ինչ ահագին դեր է կատարում քը-րիստոնեայ աշխարհում, սիօնիդը հետաքրքրական, կարևոր հարց է ոչ միայն զուտ հրէական տեսակէ-տից, այլ և քրիստոնեայ ազգերի շահերի տեսակէտից: Խնչպէս են վերաբերում քրիստոնեաները սիօ-նիդին—Այս հարցը վճռելու հա-մար երկու տարի առաջ մի հրէայ գործիչ նամակներով դիմեց եւրո-պական նշանաւոր մարդկանց, ինչդրելով նրանց չափանել իրանց կարծիքը: Նոյն աչդ մտքին հետե-ւելով, ղօկտօր Գօրգօն դիմել է ռուս գրողներին, որոնց պատասխաններն էլ այժմ հրատարակել է նա:

Պատասխաններ ուղարկել են պ. պ. Միխայլովսկի, Գօլցեվ, Աօրօ-լէնկօ, Գօրկի, Միլլեւսկի և ուրիշնե-րը: Սկզբունքով ամենքը համակը-րում են հրէական ազգին, բայց գալով սիօնիդին, մի քանիսները գտնում են որ այդ շարժման նպա-տակը անիրագործելի կամ շատ դժուար իրագործելի է: Ոմանք ցոյց են տալիս քաղաքական դժուարու-թիւնները, օրինակ Քիւրքիայի ըէ-ժիմը, ոմանք դրամական դժուա-րութիւնները: Պ. Գօրգօն պատաս-խանում է այդ առարկութիւններին, և, ի միջի ալլոց, չափաբարում է որ սիօնիստական շարժումը սույ-թանի կողմից ոչինչ արգելքի չի հանդիպի: Մի շատ զգացուած, կարճ նամակ գրել է չափանի ռուս գրող Գօրկի: Մեզ համար հետաքրքրա-կան է պ. Վ. Տօռօմեանցի պատաս-խանը: Ահա ինչ է գրել երիտա-սարդ գրողը.

«Չարաբախտ հրէայ ժողովրդի ճակատագիրը լիշեցնում է ինձ հայ

ժողովուրդը, որ նոյնպէս ենթար-կուած է ամեն տեսակ ճնշումների: Բայց մինչդեռ հայերը թողնում են Քիւրքիայում իրանց դաշտերը, հը-րէաների մէջ ծագում է հակառակ ուղղութեամբ ուժեղ շարժում դէպի հայրենի Պալեստինը, որպէս ղի յամառ և աղնիւ աշխատանքով ծագ-կեցնէ նրան: Աջողութեան առհա-ւատչեայ կարող է լինել կօօպերա-տիվ սկզբունքը, որ զրուած է իբրեւ հիմք այդ աշխատութեան: Սիօնիստ-ները հասկացան կօօպերացիայի, մասնաւորապէս երկրագործականի, մեծ նշանակութիւնը և ձեռք առան նրան, իբրեւ կռուի մի ուժեղ ղէնք բնութեան և հասարակական անըն-պաստ պայմանների դէմ: Ես, իբրեւ հայ, կարող եմ արիստալ հայերի կենսութեանս շարժման մասին, իսկ իբրեւ կօօպերատօր—ուրախա-նալ որ կօօպերացիան իր ձեռքն է առել ամենախելօք աղգը աշխա-րհում»:

Այս առիթով ղօկտօր Գօրգօն ասում է որ որքան էլ ծանր լի-նի հայերի վիճակը, նրանց պի-տի միմիջարէ այն միտքը, թէ նրանց համակրում է ամբողջ քրիստոնեայ աշխարհը, որ վաղ թէ ուշ կը լուծէ հայոց հարցը, մինչդեռ հրէաներին ոչ ոք չէ խղճում, նրանց պաշտպանողներ չը կան:

Ի վերջոյ չօգուածագիրը հետե-ւեալ եզրակացութիւններն է ա-նում. «Սոյնպէս են նայում սիօնիդ-մի վրայ քրիստոնեայ հասարակու-թեան առաջատար մարդիկը թէ մե-ղանում և թէ Արևմուտքում: Նրանց մեծամասնութիւնը, ինչպէս անս-նում ենք, համակրում է նրան, իբրեւ օրինաւոր բողոքի ղէպի հը-րէաներն ունեցած անարդար վե-րաբերմունքի դէմ, և տեսնում է նրա մէջ, ինչպէս և մենք, միակ միջոցը, որով կարելի է դուրս գալ այն ողորմելի և տխուր դրութիւ-

նից, որի մէջ գտնուում են հրէաները համարեա ամեն տեղւոյ Բայց բոլոր համակրողները չեն համաձայն մեր տեսութիւններին՝ Սիօնիդմի նպատակի իրազօրծման հնարաւորութեան մասին. մի քանիսները կառկածու են, ցոյց տալով թէ մեղանից կախուած հանգամանքները և թէ ալիսիսները, որոնք մեղանից չեն կախուած Բայց աշխարհի վրայ ոչինչ մշտական, լատենական բան չը կայ. որքան էլ կարեւոր և էական լինեն այդ պատճառները, նրանք միայն ժամանակաւոր են, անցողական. Որքան լաճախ մենք կեանքի մէջ համոզուում ենք, որ այսօր հեշտ կատարելի է այն, ինչ զեռ երէկ բոլորովին անհնարին էր թուում. Կանցնեն տարիներ. Սիօնիստական զաւրաւարը, ինչպէս ուղիղ և արդար իր

էութեամբ, աւելի և աւելի կողմնակիցներ կ'ունենայ և կը դալ ժամանակ, երբ ոչ միայն առանձին մարդիկ, բայց և ամբողջ հասարակութիւններ և ազգեր կը հասկանան մեր դրութեան անբնականութիւնը և կը խոստովանեն որ մի ժամանակ մեզ վերաբերմամբ անարդար են եղել. Մէն ժամանակը կը լինի ոչ միայն մեր չաղթանակը, այլ և բարի և արդարութեան զաղաւարի չաղթանակը. Իսկ մինչև այդ, Եսասելով այդ լուսատու սպազալին, որ պիտի վերջապէս դալ մեզ համար, մենք կը շարունակենք աշխատել մտաւոր և բարոյական կատարելագործութեան վրայ և հատաւ ու համոզուած կը զիմենք այն նպատակին, որ դեռ ենք մեզ համարու: